ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 18 >> հունիսի 2013թվականի N 56 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի N 170- Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 3-րդ մասի, 5-րդ մասի 1-ին պարբերության, 6-րդ մասի դրույթներով, **համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի համայնքի ավագանու 2012թվականի նոյեմբերի 22-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 170-Ա որոշման 5-րդ կետով հաստատված՝ Գյումրու քաղաքապետարանի <<Ա.Սարգսյանի անվան համալիր մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակում (հավելված N 44) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) Ավելացնել նոր 10-րդ տող՝
ըստ հավելվածի սյունակների, 10-րդ տողում համապատասխանաբար կարդալ՝ <<Հ/Հ>> սյունակում՝ <<10>>, <<Հաստիքի անվանումը>> սյունակում՝ <<Տնտեսվար>>, <<Հաստիքային միավորը >> սյունակում՝ <<1>>, <<Պաշտոնային դրույքաչափը>> սյունակում՝ <<62050>>, <<Ամսական>> սյունակում՝ <<62050>>, <<Տարեկան>> սյունակում՝ <<434400>>,
2) <<Ընդամենը աշխատավարձ >> տողում՝ <<30>> թիվը փոխարինել <<31>> թվով, <<1816350>> թիվը փոխարինել <<1878400>> թվով, <<21796200>> թիվը փոխարինել <<22230600>> թվով,
3) <<Ընդամենը>> տողում՝ <<1866500>> թիվը փոխարինել <<1928550>> թվով, <<22398000>> թիվը փոխարինել <<22832400>> թվով,
4) <<Աշխատակիցների թվաքանակը>> տողում՝ <<23>> թիվը փոխարինել <<24>> թվով:

Ա.Բաղրամյան_____

Լ.Բարսեղյան _____

Մ.Գաբոյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Տ.Հովհաննիսյան_____

Ռ.Մխիթարյան _____

Է.Մկրտչյան _____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ